ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/16

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, 18.04.2019թ. թիվ 26/26-1/6406-2019 գրությամբ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացված փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրության հիման վրա 18.04.2019թ. թիվ 26/26-1/6406-2019 գրությամբ նախաձեռնել է «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգի 13-րդ և 14-րդ չափաբաժինների մասով «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ գնահատող կողմից ճանաչվել են 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին համակարգի (eauction.armeps.am) միջոցով ծանուցվել է երեք (3) օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Սահմանված ժամկետում «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ն իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չի ներկայացրել:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշել է մերժել «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ի գնման հայտը:»

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի շրջանակներում 02.06.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ն:

2. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Պատվիրատուի 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրության համաձայն՝ սահմանված կարգով Ընկերությունը **<u>համակարգի (eauction.armeps.am) միջոցով ծանուցվել է</u>** երեք (3) օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն վերջինս իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չի ներկայացրել:

3. Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.1-ի կետի.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Աննա Դիանա» ՍՊԸ /կոնսորցիում «Ալիսա» ԱԿ, Ա/Ձ Անահիտ Անտոնյան և «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ, որոնք որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից այդ մասնակիցների հայտերը մերժվեցին»:

4. ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 21-րդ կետի դրույթով, 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 6 արձանագրությունը, որով Ընկերության հայտը մերժվել է, և որոշ փաստաթղթեր:

5. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6406-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրությունը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն

հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ և 5-րդ ենթակետերի համաձայն՝

Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը՝

4) գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ **<u>առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում</u>** համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը.

5) սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 21-րդ կետով սահմանվում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին:

Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 7.12-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: **<u>Ընդ որում, եթե</u>** մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ **<u>առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով</u>**

սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ն:

ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված Պատվիրատուի 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրության համաձայն՝ սահմանված կարգով Ընկերությունը **համակարգի (eauction.armeps.am) միջոցով ծանուցվել է** երեք (3) օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն վերջինս իր որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը չի ներկայացրել:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.01.2019թ. նիստի թիվ 6 արձանագրության 1.1-ի կետի.

««ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԾՁԲ-7/1» ծածկագրով ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորումը հիմնավորող փաստաթղթերը առկա են և համապատասխանում են ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ «Աննա Դիանա» ՍՊԸ /կոնսորցիում «Ալիսա» ԱԿ, Ա/Ձ Անահիտ Անտոնյան և «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ, որոնք որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացրել և գնահատող հանձնաժողովի կողմից այդ մասնակիցների հայտերը մերժվեցին»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 21-րդ կետի դրույթով, 08.02.2019թ. թիվ ԴՎԱ/514 գրությամբ լիազորված մարմին է ներկայացրել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 6 արձանագրությունը, որով Ընկերության հայտը մերժվել է, և որոշ փաստաթղթեր:

Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստը, որով կապացուցվեր Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից

Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Ընկերությանը համակարգի միջոցով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցած լինելը, **Պատվիրատուի կողմից չի ներկայացվել:**

Մինչդեռ Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ նախաձեռնելու նպատակով պետք է ներկայացներ Ընկերության տվյալները՝ **համապատասխան հիմքերով**: Տվյալ դեպքում որպես հիմք հանդիսանում է Ընկերությանը՝ Կարգի և Ընթացակարգի հրավերի համապատասխան գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից համակարգի միջոցով առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին, որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցում ուղարկելը, այսինքն՝ Ընկերության կողմից Ընթացակարգի շրջանակներում պատշաճ ծանուցված լինելը, քանի որ ծանուցումն ուղարկելուց հետո է միայն հոսում 3 աշխատանքային օր ժամկետը, ինչը և չպահպանելու դեպքում գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 5-րդ ենթակետով, մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, որի արդյունքում ի հայտ է գալիս Կարգի 21-րդ կետով սահմանված պահանջը:

Սույն գործի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից Պատվիրատուին 01.06.2021թ-ին պահանջ է ներկայացվել Ընկերությանը ծանուցումն ուղարկած լինելու փաստը հավաստող փաստաթուղթ ներկայացնելու վերաբերյալ, սակայն մինչև ՍՑ-ՆԳ-2019/16 ընթացակարգի քննության արդյունքներով 17.06.2021թ.-ին հրավիրված որոշման հրապարակման նիստը Պատվիրատուի կողմից ապացույց չի ներկայացվել:

Նշվածի արդյունքում արձանագրում եմ, որ սույն ընթացակարգի նախաձեռնման նպատակով Պատվիրատուի կողմից Ընկերությանը համակարգի միջոցով որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ պատշաճ ծանուցած լինելու փաստը չներկայացնելու հետևանքով վիճելի է մնացել դրա գոյության փաստը:

Վերոգրյալի արդյունքում գտնում եմ, որ սույն գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստի բացակայության պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել և հանգեցնել «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 18.04.2019թ. թիվ 26/26-1/6406-2021 գրությամբ «Աբովյանի հացի գործարան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**